## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստ (N 3)**

11 մարտի 2011թ. ժամը $15^{00}$

1 «Սի.Օ.Էյ.Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին:
(Սերոբ Խաչատրյան)

**2. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Ա. Բարխուդարյան)

2.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.2 «Փարպի» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.3 «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.4 «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

2.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

2.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

2.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 13-ի N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

**3. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Ա. Բարխուդարյան)

3.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ



հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ):

3.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի N Մ-360-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ձայնալարերը հեռացվածների միավորում» հասարակական կազմակերպություն):

3.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-39-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

**4. Այլ հարցեր**

4.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-092-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 14-ի N Մ-910-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - -Ա ձր 3/1

քաղ. Երևան

## «ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի -ի N 01/04.2/ -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 639997 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Սի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սի.Օ.էյ.էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի 11 փետրվարի 2011թ. 01/2011 նիստի որոշմամբ

25 Փետրվարի 2011թ.

| ՀՀ Արմավիր մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում | | | ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | | ՀՀ Արմավիր մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում |
| 2 | Ծրագրի նպատակները | | ՀՀ Արմավիրի մարզի, Մյասնիկյան համայնքի, միջնակարգ դպրոցական համալիրի հիմնանորոգման երկրորդ փուլ – երկու ուսումնական մասնաշենքերի կապիտալ վերանորոգում և մարզադահլիճի կտուրի վերանորոգում: |
| 3 | Բարեգործները և ֆինանսավորման աղբյուրները | | Հայաստանի Մանուկներ Հիմնադրամ, ԱՄՆ 162 Fifth Avenue, Suite 900, New York, NY 10010 |
| 4 | Ծրագրի կատարողը | | «Սի.Օ.էյ.էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամ», ՀՀ, ք. Երևան 0001,Հյուսիսային պողոտա 1-ին շենք, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ 02569972, «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/h 15700 10241550100, |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը | | ՀՀ Արմավիր մարզի Մյասնիկյան համայնք |
| | Ծրագրի բյուջեն | | 639,997 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (վեց հարյուր երեսունինը հազար ինը հարյուր իննսուն յոթ ԱՄՆ դոլար)՝ առանց ԱԱՀ |
| | | | Մասնաշենք N 1 և 2 |
| | | 1 | Պատեր - 9,431.95 |
| | | 2 | Տանիք - 159,913.07 |
| | | 3 | Միջնորմեր - 10,914.93 |
| | | 4 | Հատակներ - 106,605.84 |
| | | 5 | Բացվածքներ - 109,287.20 |
| | | 6 | Աստիճանավանդակ ներքին - 5,263.37 |
| | | 7 | Հարդարման աշխատանքներ - 132,692.33 |
| | | 8 | Արտաքին հարդարում - 33,527.47 |

ձր 3/1

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Մանրամասն Բյուջե Արժեքները ներկայացված են ԱՄՆ դոլարով | | 9 | Տարածքի մաքրում շին. աղբից - 6,169.67 |
| | | | 10 | Ներքին ջրամատակարարում - 7,551.61 |
| | | | 11 | Ներքին կոյուղի - 6,928.45 |
| | | | 12 | Ներքին ջեռուցում - 14,292.76 |
| | | | 13 | Էլ. սարքավորումներ - 8,039.24 |
| | | | 14 | Էլ. լուսավորություն - 12,656.60 |
| | | | | Մասնաշենք N 4 |
| | | | 15 | Տուֆե սալերի նորոգում - 42.74 |
| | | | 16 | Արտաքին պատերի կարգ.ցանցերի լրացում թ/բ բլոկով - 762.30 |
| | | | 17 | Հատակներ - 3,648.15 |
| | | | 18 | Բացվածքներ - 3,425.51 |
| | | | 19 | Հարդարման աշխատանքներ - 7,400.37 |
| | | | 20 | Արտաքին հարդարում - 976.47 |
| | | | 21 | Տարածքի մաքրում շին. աղբից - 285.60 |
| | | | 22 | Էլ. լուսավորություն - 181.50 |
| | | | | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ - 639,997.01 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | | | ՀՀ Արմավիր մարզի Մյասնիկյան համայնքը |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | | | 22 մարտի 2011թ. - 31 դեկտեմբերի 2011թ. |
| 9 | Միջոցառումները (ըստ փուլերի, եթե ծրագիրը փուլավոր է առանձնացել) իրականացման ժամկետները և ժամկետները ըստ ֆինանսական միջոցների | | | Շինարարական աշխատանքները պատշաճ կատարելու համար «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ ի հետ կնքվելու է պայմանագիր և ամբողջ արժեքը կհամապատասխանի ծրագրի բյուջեում ֆիքսված գումարին: |
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | | | Բեռների ներմուծում ծրագրով չի նախատեսվում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել տարբեր տեսակի շինանյութ ըստ կապալառուի հետ կնքված պայմանագրի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | | | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չէ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | | | Նախատեսվում է համագործակցել ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերը համակարգող հանձնաժողովի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի և Արմավիր մարզի Մյասնիկյան համայնքապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund (COAF) բարեգործական հիմնադրամի և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից: |

«Սի.Օ.Էյ.Էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի» գործադիր տնօրեն

Սերոբ Խաչատրյան

Ա/Ք 3/1

---

Ա/Ք 3/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա/Ք 3/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.03.11 № 3/13.8-1/2231-11

Ձեր № ___________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.03.11թ. N 15/15.1/2930-11 գրության՝ <<Սի. Օ. Էյ. Էֆ.>> մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան հեռ. 595-229

034/6397-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հր. 3/1

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ press@moj.am

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ*
*պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ*

01/1296-11
10.03.11

*Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 2-ի 15/15.1/2930-11 թվակիր հանձնարարականի*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Սի. Օ. Էյ. Էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի» կողմից իրականացվող «ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» բարեգործական ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/6400-11

Կատ.՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

Հր. 3/1

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/1761-11 " 3.03. 11
2011

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 02.03.2011թ., N 15/15.1/2930-11 գրության, հայտնում ենք, որ «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության գիտության և նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Մ.ՄԿՐՏՉՅԱՆ**

031/5864-11

*Կատ.՝ Ն.Մնացականյան*
*հեռ.՝ 524777*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ար.3/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԱ/3-4/1237-11
4.03.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.03.2011թ. թիվ 15/15.1/2930-11 գրությանը կից ներկայացված «Սի. Օ. էյ. էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

ԾԱԱ/6089-11

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ար.3/2.1

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N ՀԴ/22/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացու-թյունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Կանադայի Բժշկական ասոցիացիայի կողմից «ՄԵՍԿՈ» կազմակերպության միջոցով Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով, որպես օժանդակություն, ուղարկված տեղային զննման ուլտրաձայնային սարքի (1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 15000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 300 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) և զննման ուլտրաձայնային սարքի զոնդի (1 տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 7000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 200 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետ-տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ԼՐ·3/2.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

4.03.11 № 3/3.8-2/2036-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 02.02.2011թ. N15/15.1/2925-11 գրությամբ ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 1-ին կետում նշված 15000 ԱՄՆ դոլար արժողությամբ տեղային զննման ուլտրաձայնային սարքի բեռնափոխադրման ծախսերի դրամական միավորը (300 եվրո) համապատասխանեցնել կից փաստաթղթերում նշված արժույթին (300 ԱՄՆ դոլար), իսկ զննման ուլտրաձայնային սարքի զոնդի արժեքը (75000 ԱՄՆ-ի դոլար) և բեռնափոխադրման ծախսերի արժույթը (200 եվրո)՝ բեռն ուղեկցող փաստաթղթերի տվյալներին (համապատասխանաբար՝ 7500 ԱՄՆ դոլար և 200 ԱՄՆ դոլար):

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

024/5985-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

ԼՐ·3/2.1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

10.03.11 N ԻՖ/22/1608-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.03.2011թ. թիվ 15/15.1/2925-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

020/6399-11

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ․3/2.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

ԱԱ/3-6/1282-11
9.03.11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 2-ի համար 15/15.1/2925-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծում առկա են անճշտություններ, մասնավորապես՝ անհրաժեշտ է «300 եվրո» արտահայտությունը փոխարինել «300 ԱՄՆ դոլար» արտահայտությամբ, «200 եվրո» արտահայտությունը՝ «200 ԱՄՆ դոլար»-ով, իսկ «75000 ԱՄՆ-ի դոլար»-ը՝ «7000 ԱՄՆ դոլար» արտահայտությամբ:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/6249-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

Հ․3/2.1

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 4.03.11, N 3/3.8-2/2036-11 | |
| 1. Սխալ է նշված արտարժույթը և բեռի արժեքը | 1. Վրիպակն ուղղված է |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե - 9.03.11, N ԱԱ/3-6/1282-11 | |
| 1. Սխալ է նշված արտարժույթը և բեռի արժեքը | 1. Վրիպակն ուղղված է |

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ մարտի 2011 թվականի N Մ - -Ա Հ․3/2.2

քաղ. Երևան

## «ՓԱՐՊԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանացի բարերար՝ Յոհան Հեյնի միջոցներով «Փարպի» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի՝ 2 տեղ, 250 կգ ընդհանուր քաշով, 100 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 148 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Փարպի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների համար:

2. «Փարպի» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հր. 3/2.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

4.03.2011թ № 3/3.8-2/2047-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 02.02.2011թ. N15/15.8/2963-11 գրությամբ ներկայացված «Փարպի» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- ներկայացված որոշման նախագծում նշված չէ բեռի ստացման նպատակը, ինչպես նաև պարզաբանված չէ բեռն ուղարկող գերմանական «Էլեկտում» ընկերության կազմակերպաիրավական տեսակը: Եթե բարեգործական բեռն ուղարկողը հանդիսանում է առևտրային կազմակերպություն, ապա ըստ ՀՀ կառավարության 16.01.03թ. N66-Ն որոշման «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 5-րդ կետի՝ հարկային արտոնությունների ստացման նկատառումով ներկայացված որոշման նախագիծը բարեգործական որակման ենթակա չէ,

- անհրաժեշտ է որոշման նախագծին կցել նաև բեռների բաշխման ցանկը՝ ըստ առանձին շահառուների հատկացվող բեռների տեսականու և արժեքների:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/5388-11
4.03.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հր. 3/2.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ.

№ ՀԱ/3-6/1281-11
3.03.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. մարտի 2-ի համար 15/15.8/2963-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Փարպի» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել բեռի բաշխման ցանկ և մասնացուցակ:

Ծրագրի բարեգործական որակելը նպատակահարմար ենք համարում վերը նշված պահանջները կատարելուց հետո:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/6250-11
3.03.2011թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Փարպի» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ներկայացված որոշման նախագծում նշված չէ բեռի ստացման նպատակը, ինչպես նաև պարզաբանված չէ բեռն ուղարկող գերմանական «Էլեկտում» ընկերության կազմակերպաիրավական տեսակը: Եթե բարեգործական բեռն ուղարկողը հանդիսանում է առևտրային կազմակերպություն, ապա ըստ ՀՀ կառավարության 16.01.03թ. N66-Ն որոշման «Բարեգործական ծրագրերը բարեգործական ոչակելու և գրանցելու կարգի» 5-րդ կետի՝ հարկային արտոնությունների ստացման նկատառումով ներկայացված որոշման նախագիծը բարեգործական որակման ենթակա չէ,<br>- անհրաժեշտ է որոշման նախագծին կցել նաև բեռների բաշխման ցանկը՝ ըստ առանձին շահառուների հատկացվող բեռների տեսականու և արժեքների: | Դիտողությունը հաշվի է առնվել, նախագիծը լրամշակվել է:<br>Կազմակերպության պարզաբանումը կցվում է (տեղի է ունեցել սխալմունք. բեռը ուղարկվել է ոչ թե գերմանական «Էլեկտում» ընկերության միջոցներով, այլ նշված ընկերությունից ծեռք է բերվել Գերմանիայի բնակիչ՝ Յոհան Հեյնի միջոցներով): |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - անհրաժեշտ է ներկայացնել բեռի բաշխման ցանկ և մասնացուցակ: | Դիտողությունը հաշվի է առնվել, կազմակերպության պարզաբանումը կցվում է: |

ձր.3/2.2

ձր.3/2.2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին

06.03.2011թ.

Ի լրումն 01.02.2011թ N 1 գրության հայտնում ենք Ձեզ,որ «Փարպի» ԲՀ-ին բարեգործական նպատակներով նվիրած բեռը ` 100 եվրո արժողությամբ նվիրել է Գերմանիայի բնակիչ Յոհան Հեյնը:
Բեռը բաշխվել հետևյալ սոցիալապես անապահով ընտանիքներին՝

Բաղդասարյան Նազիկ
Իսպիրյան Անի
Բարսեղյան Գոհար
Խաչատրյան Հովհաննես
Նազարյան Նատալիա
Կարապոա Սյուզի
Գալստյան Մարիամ
Մկրտչյան Օֆելյա
Իսպիրյան Վասպուր
Գասպարյան Սարգիս

«Փարպի» ԲՀ-ի նախագահ՝ Ի. Առաքելյան

ՓԱՐՊԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ FUND 012167

480

...ՈՒԹՅՈՒՆ
094/6458
10 03 թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ձր.3/2.3

____ մարտի 2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

«ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի -ի N 3/3.8-2/, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի -ի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի -ի N ԱԱ/3-6/ և Արարատի մարզպետի 2011 թվականի հունվարի -ի եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ Հայկական Հիմնադրամ կազմակերպության կողմից MEBS Global Reach LC կազմակերպության միջոցով «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի՝ (շինանյութեր և բժշկական սարքավորումներ՝ 14 տեղ, 13 287 կգ ընդհանուր քաշով, 157 743 00 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7 100 00 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան վերանորոգման և վերազինման աշխատանքների համար և ամբողջովին անհատույց հանձնվելու է նշված ՓԲԸ-ին:

2. «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ին՝ նշված բեռի համապատասխան ծանկերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Արարատի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀՐ. 3/2.3
2/28.11

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

2.02.2011թ. № 3/3.8-2/796-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 26.01.2011թ. N15/15.11/898-11 գրությամբ ներկայացված «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/2633-11
2.02.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐ. 3/2.3
2/28.11

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

11.02.2011թ. N ՀՔ/22/802-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.01.2011թ. թիվ 15/15.11/898-11 գրության կապակցությամբ՝ «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/3743-11
11.02.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ստ. 3/2.3
2/28.11

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Ð»é.

ՀՀ/3-6/487-11
2.02.2011թ

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի հունվարի 26-ի թիվ 15/15.11/898-11 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված <<Մասիս բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին>> որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է ներկայացնել <<Բարեգործության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ծրագիրը:

**Ա.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/2636-11
2.02.2011թ

*Կատարող՝ Մ.Շահնազարյան*
*Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ.՝ 594 649*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՌЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

**МАРЗПЕТ АРАРАТА**

Ստ. 3/2.3
2/28.11

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
հեռ.՝ /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 1/4/1-2/421-11 "4" փետրվարի 2011թ.

Ձեր՝ N 15/15.11/898-10
26.01.2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշման, ԱՄՆ-ի Միացյալ Հայկական Հիմնադրամ կազմակերպության կողմից <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման բարեգործական ծրագիրը որակել որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

*Կատ.՝ Գ.Ավետիսյան*
*Հեռ.՝/0235/2-00-84*

111/2845-11
4.02.2011թ

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - անհրաժեշտ է ներկայացնել «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ծրագիրը և հիմնավորել բժշկական կենտրոնի հասցեով ստացված շինանյութերի ներմուծման անհրաժեշտությունը: | Համաձայն Հաաստանի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 8-ի «Բարեգործության մասին» օրենքի 3-րդ հոդվածի «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հանդիսանում է բարեգործություն ստացող, այլ ոչ թե ծրագիր իրականացնող: Իսկ նույն օրենքի 13-րե հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Բարեգործական ծրագիրը ոչ առևտրային կազմակերպության կողմից սույն օրենքի նպատակներին համապատասխան, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նկարագրությունն է, որը հաստատվում է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցվում է: |

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Պ-Ն Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ –ում մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին ինչպես նյութատեխնիկական բազայի,այնպես էլ ժամանակակից բուժտեխնիկայի առումով:
Ֆրանսիական «ԼԻՈՆ» ակումբը ունի մասնաճյուղ Մասիս քաղաքում «Մասիս սար» անունով,որի անդամների մի մասը կազմում են «Մասիսի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկները:

Մեր խնդրանքով ֆրանսիական «ԼԻՈՆ» ակումբի ղեկավարները մի քանի անգամ այցելել են մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքը և քանի որ մեր ֆինանսական միջոցները սուղ են,նրանք ցանկություն են հայտնել կատարել շինվերանորոգման աշխատանքներ,ինչպես նաև վերազինել բաժանմունքը բուժտեխնիկայով:
Նրանք միաժամանակ ցանկություն են հայտնել անհրաժեշտ շ ինարարական նյութերը ներմուծել Ֆրանսիայից ,ուղարկել համապատասխան մասնագետներ այն վերանորոգելու նպատակով,որից հետո ներմուծել նաև բուժսարքավորումներ:

Այն ամբողջությամբ կատարվում է որպես բարեգործություն:

ՏՆՕՐԵՆ Ա.Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

—— մարտի 2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

### «ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի -ի N 3/3.8-2/, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի –ի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի -ի N ԱԱ/3-6/ և Արարատի մարզպետի 2011 թվականի հունվարի -ի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ Հայկական Հիմնադրամ կազմակերպության կողմից MEBS Global Reach LC կազմակերպության միջոցով «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի՝ (շինանյութեր և բժշկական սարքավորումներ՝ 22 տեղ, 1 713 կգ ընդհանուր քաշով, 69 665 00 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7 395 00 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան վերանորոգման և վերազինման աշխատանքների համար և ամբողջովին անհատույց հանձնվելու է նշված ՓԲԸ-ին:

2. «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ին՝ նշված բեռի համապատասխան ծևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Արարատի մարզպետին:

3/10/2011 4:15 PM

Հր. 3/2.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

2/28.12

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

2.02.2011թ. № 3/3.8-2/792-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 26.01.2011թ. N15/15.11/897-11 գրությամբ ներկայացված «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/2627-11
2.02.2011թ.

---

Հր. 3/2.4
2/28.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

11.02.2011թ N ՀՊ/22/797-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.01.2011թ. թիվ 15/15.11/897-11 գրության կապակցությամբ՝ «Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/3747-11
11.02.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հր 3/2.4
2/28.12

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Ð»é.

ՀՀ/3-6/488-11
2.02.2011թ

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի հունվարի 26-ի թիվ 15/15.11/897-11 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված <<Մասիս բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին>> որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է ներկայացնել <<Բարեգործության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ծրագիրը:

Ա.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Մ.Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ.՝ 594 649

044/2637-11
2.02.2011թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Հր 3/2.4
2/28.12

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
հեռ.՝ /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 1/4/1-2/413-11 "4" փետրվարի 2011թ.

Ձեր՝ N 15/15.11/897-10
26.01.2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշման, ԱՄՆ-ի Միացյալ Հայկական Հիմնադրամ կազմակերպության կողմից <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման բարեգործական ծրագիրը որակել որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ.՝ Գ.Ավետիսյան
Հեռ.՝/0235/2-00-84

111/2317-11
4.02.2011թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - անհրաժեշտ է ներկայացնել «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ծրագիրը և հիմնավորել բժշկական կենտրոնի հասցեով ստացված շինանյութերի ներմուծման անհրաժեշտությունը: | Համաձայն Հաաստանի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 8-ի «Բարեգործության մասին» օրենքի 3-րդ հոդվածի «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հանդիսանում է բարեգործություն ստացող, այլ ոչ թե ծրագիր իրականացնող: Իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Բարեգործական ծրագիրը ոչ առևտրային կազմակերպության կողմից սույն օրենքի նպատակներին համապատասխան, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նկարագրությունն է, որը հաստատվում է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցվում է: |

Ռ.3/2.4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Պ-Ն Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ռ.3/2.4

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Մասիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ –ում մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին ինչպես նյութատեխնիկական բազայի,այնպես էլ ժամանակակից բուժտեխնիկայի առումով:

Ֆրանսիական «ԼԻՈՆ» ակումբը ունի մասնաճյուղ Մասիս քաղաքում «Մասիս սար» անունով,որի անդամների մի մասը կազմում են «Մասիսի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկները:

Մեր խնդրանքով ֆրանսիական «ԼԻՈՆ» ակումբի ղեկավարները մի քանի անգամ այցելել են մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքը և քանի որ մեր ֆինանսական միջոցները սուղ են,նրանք ցանկություն են հայտնել կատարել շինվերանորոգման աշխատանքներ,ինչպես նաև վերազինել բաժանմունքը բուժտեխնիկայով:

Նրանք միաժամանակ ցանկություն են հայտնել անհրաժեշտ շ ինարարական նյութերը ներմուծել Ֆրանսիայից ,ուղարկել համապատասխան մասնագետներ այդ վերանորոգելու նպատակով,որից հետո ներմուծել նաև բուժսարքավորումներ:

Այն ամբողջությամբ կատարվում է որպես բարեգործություն:

ՏՆՕՐԵՆ Ա.Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

---

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ռ.3/2.5

___ մարտի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱՄ/3-6/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչային կապի սարքավորումները (մեկ տեղ, 176 կգ ընդհանուր քաշով, 35717 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 372000 դրամ, «Զվարթնոց» ՄՏ) և աթոռները (8 տեղ, 64 կգ ընդհանուր քաշով, 460.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 320 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

